600.0005.12.01.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 փետրվարի 2001 թվականի №5
ք. Երևան

«ՀԱՅԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «բ» կետը և 42-րդ հոդվածը, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998 թվականի օգոստոսի 28-ի №39 որոշմամբ սահմանված կարգը և ելնելով սպառողներին ջերմային էներգիայի հուսալի ու անվտանգ մատակարարման ապահովման անհրաժեշտությունից, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «Հայգազարդ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել Շիրակի մարզի Մայիսյան գյուղի վարչական տարածքում ջերմային էներգիայի բաշխման գործունեություն իրականացնելու լիցենզիա՝ 2 տարի գործողության ժամկետով:
2. Ընդունել ի գիտություն, որ լիցենզիան սահմանված կարգով կգրանցվի և ուժի մեջ կմտնի պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը «Հայգազարդ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ էներգետիկայի հանձնաժողով ներկայացվելուց հետո:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ **Վ.ՄՈՎՍԵՍՅԱՆ**